ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թվականի N 46

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 23 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 9 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 12-րդ հոդվածի պահանջով Արենիի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Արենի համայնքի ավագանու 23 նոյեմբերի 2016թվականի թիվ 9 նիստի օրակարգը

1. Նիստի օրակարգը հաստատելու մասին
2. Արենի համայնքի տարածքում 2017 թվականին տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին
3. 2017 թվականի համար Արենի համայնքի ղեկավարի վարձատրության չափը հաստատելու մասին
4. 2017թվականի համար, Արենիի համայնքապետարանի աշխատակազմի և համայնքապետարանի ենթակա կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին
5. Արենի համայնքի 2017 թվականի տարեկան բյուջեի նախագիծը հաստատելու մասին
6. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող 3.20733հա հողամասը վարձակալությամբ հատկացնելու մասին:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԵՐԵՄՅԱՆ ՆԱԻՐԻ
2. ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՄՎԵԼ
4. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ
5. ՍԻՄՈՆՅԱՆ ՄԵԼՍԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌԱՖՖԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թվականի N 47-Ն

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017ԹՎԱԿԱՆԻՆ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Տուրքերի և Վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ, 10-րդ հոդվածների և <<Տեղական Ինքնակառավարման Մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետերի պահանջներով Արենիի համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Արենի համայնքում 2017թվականին տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանել հետևյալ դրույքաչափերով

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 15000 դրամ.

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-իցմինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30000 դրամ,և

բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50000 դրամ,

բգ) 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50 000 դրամ,

բդ) 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 100 000 դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3000 դրամ,

դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5000 դրամ:

2. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ շենքերի, շինությունների նախկինումտրված շինարարության թույլտվության երկարացման համար տեղական տուրք չի սահմանվում:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5000 դրամ:

4. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամյակի համար՝ 2000դրամ.

5. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամյակի համար՝ 2000 դրամ:

6. Համայնքի տարածքում՝

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 10 դրամ՝մեկ քառակուսի մետրի համար.

բ) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 5000 դրամ.

ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 1000 դրամ.

գ) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 50 000 դրամ.

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 դրամ.

գ) այլ արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.

դ) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ:

8. ՀՀ Վայոց Ձոր մարզի Արենի համայնքի անվանումը ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 100 000 դրամ:

9. Համայնքի տարածքում աղբահանությունը պատշաճ կերպով կազմակերպելու համար սպասարկման վճար է սահմանվում՝ համայնքի տարածքում բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսեկան 50 ՀՀ դրամ:

10. համայնքի տարածքում խմելու ջրի սպասարկման որակը բարձրացնելու համար խմելու ջրի սպասարկման վճար է սահմանվում՝

ա/համայնքի տարածքում բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսեկան 50 ՀՀ դրամ:

բ/ հասարակական և արտադրական տարածքների 1քմ-ի համար ամսեկան 50 ՀՀ դրամ:

11. մայր առուներից օգտվող հողատերերի համար ոռոգման ջրի սպասարկման վճար սահմանել՝ 1հա-ի համար տարեկան 15հազար ՀՀ դրամ:

12. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա) առևտրի օբյեկտների համար՝ 25 000 դրամ.

բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50 000 դրամ.

գ) բաղնիքների (սաունաների) համար՝ 200 000 դրամ.

դ) խաղատների կազմակերպման համար՝ 500 000 դրամ.

ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250 000 դրամ.

զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000 դրամ:

13. Համայնքի տարածքում մարդատարտաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 5 000 դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԵՐԵՄՅԱՆ ՆԱԻՐԻ
2. ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՄՎԵԼ
4. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ
5. ՍԻՄՈՆՅԱՆ ՄԵԽԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՐԱՖՖԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թվականի N 48

2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ կետի պահանջով Արենիի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Արենի համայնքի ղեկավարի 2017թվականի վարձատրության չափը սահմանել 300.000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԵՐԵՄՅԱՆ ՆԱԻՐԻ
2. ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՄՎԵԼ
4. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ
5. ՍԻՄՈՆՅԱՆ ՄԵԽԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՐԱՖՖԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թվականի N 49

2017ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԱՐԵՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետի պահանջով Արենիի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Արենիի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը՝ 12 աշխատակից:
2. Հաստատել Արենիի գյուղապետարանի աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն սույն որոշման թիվ 1 հավելվածի:
3. Հաստատել <<Արենի>> ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը՝ 7 աշխատակից:
4. Հաստատել <<Արենի>> ՀՈԱԿ-ի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն սույն որոշման թիվ 2 հավելվածի:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԵՐԵՄՅԱՆ ՆԱԻՐԻ
2. ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՄՎԵԼ
4. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ
5. ՍԻՄՈՆՅԱՆ ՄԵԼՍԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՐԱՖՖԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հավելված №1

Արենի համայնքի ավագանու

2017թվականի նոյեմբերի 23-ի թիվ 49- որոշման

2017ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԱՐԵՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ:

2017թ.				
	Հաստիքի անվանումը	Հաստիքի միավորը	Պաշտոնային դրույքաչափը ՀՀ դրամ	Համայնքային ծառայության անվանացանկով հաստատված պաշտոններ
1	2	3	4	5
1	Գյուղապետի տեղակալ	1	220.000	
2	Աշխատակազմի քարտուղար	1	240.000	Աշխատակազմի քարտուղար
3	Գլխավոր մասնագետ- ֆինանսիստ	1	160.000	Գլխավոր մասնագետ ֆինանսիստ
4	Գլխավոր մասնագետ- հաշվապահ	1	160.000	Գլխավոր մասնագետ հաշվապահ
5	Առաջատար մասնագետ	1	145.000	Առաջատար մասնագետ
6	Առաջին կարգի մասնագետ	1	90.000	Առաջին կարգի մասնագետ
7	Հավաքարար	2	72.800	
8	Անասնաբույժ	0.5	72.800	
9	Գեղմասվար	1	72.800	
10	Պահակ	2	72.800	

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ր. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. ՍԻՄՈՆՅԱՆ

Հավելված №2

Արենի համայնքի ավագանու

2017թվականի նոյեմբերի 23-ի թիվ 49 որոշման

2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ <<ԱՐԵՆԻ>> ՀՈԱԿ-ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ:

2017թ.			
	Հաստիքի անվանումը	Հաստիքի միավորը	Պաշտոնային դրույքաչափը ՀՀ դրամ
1	Տնօրեն	1	85.000
2	Տրակտորավար	1	80.000
3	Ջրվար-հինգ ամիս ժամկետով	2.5	72.800

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թվականի N 50

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2017ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 55-րդ հոդվածի, <<Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի պահանջներով Արենիի համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Հաստատել Արենի համայնքի 2017 թվականի տարեկան բյուջեի նախագիծը և առաջարկված փոփոխություններով երկամսյա ժամկետում ներկայացնել ավագանու հաստատմանը:

- Եկամտային մասով՝
  46116.8 հազար (քառասունվեց միլիոն մեկ հարյուր տասնվեց հազար ութ հարյուր) ՀՀ դրամ
- Ծախսերի մասով՝

  47116.8 հազար (քառասունյոթ միլիոն մեկ հարյուր տասնվեց հազար ութ հարյուր) ՀՀ դրամ
- Բյուջեի տարեսկզբի նախնական ազատ մնացորդը՝

Վարչական մաս 1000 հազար(մեկ միլիոն) ՀՀ դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԵՐԵՄՅԱՆ ՆԱԻՐԻ
2. ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՄՎԵԼ
4. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ
5. ՍԻՄՈՆՅԱՆ ՄԵԼՍԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌԱՖՖԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թվականի N 51

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ <<ՏԱՆԿԻ ՁՈՐ>> ԿՈՉՎՈՂ ՀԱՆԴԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ 3.20733ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի, <<Հողային օրենսգրքի>> 76-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով Արենի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Տալ համաձայնություն

Արենի համայնքի սեփականություն հանդիսացող <<Տանկի ձոր>> կոչվող հանդամասում գտնվող, 3.20733 հա (ծածկագիրը՝ 10-008-0154-, նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր, գործառական նշանակությունը՝ ընդերքօգտագործման) հողամասը մրցույթով, 25 տարի ժամկետով, տրամադրել վարձակալության: Նախնական գինը սահմանել 55 հազար ՀՀ դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԵՐԵՄՅԱՆ ՆԱԻՐԻ
2. ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՄՎԵԼ
4. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ
5. ՍԻՄՈՆՅԱՆ ՄԵԽԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌԱՖՖԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ